

ՓԵՏՐՎԱՐ 2020

ԱՄՍԱԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ





1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ	4
1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում /Երևան/	5
1.2. Ջրամատակարարման համակարգի կառավարում /Մարզեր/ ..	6
1.3. Ջրաչափերի փոխարինում և տեղափոխում	9
1.4. Ջրահեռացման համակարգ	9
1.5. Կեղտաջրերի մաքրում և հեռացում	10
1.6. Էներգահամակարգ	11
1.7. Մեքենա-մեխանիզմներ	11
2. Առևտրային տնօրինություններ	12
2.1. Բաժանորդների տվյալներ	13
2.2. Հասույթ	13
2.3. Գանձում	15
2.4. Դեբիտորական պարտքեր /Դրավաբանական վարչություն/	15
2.5. Ջրաչափեր	17
2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում	18
3. Տեխնիկական տնօրինություն	19
3.1. Ջրամատակարարման շարունակականություն	20
3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում	21
3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ	24
3.4. Ջրատար համակարգի բարելավում	24
4. Լրատվական ծառայություն	27
5. Որակի, առողջության և անվտանգության ծառայություն	30
5.1. Փաստաթղթերի մշակում	31
5.2. Դասընթացներ /Մեմինարներ	31
5.3. Ռիսկերի հայտնաբերում/մեղմացնող միջոցառումների կիրառում	32
6. Համակարգչային ցանց և սերվերային համակարգ	33
6.1. Համակարգչային ցանց.....	34
6.2 Բնտերակտիվ համակարգ	34

ՀԱՀԱԳՈՐԾՄԱՆ
ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԻ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ /ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ/

Հաշվետու ժամանակահատվածում շահագործման տարածաշրջանային տնօրինությունների սպասարկման տարածքում գտնվող մի շարք քաղաքներում և գյուղերում իրականացվել են վթարաորոնողական և ջրագծերի վերակառուցման, ինչպես նաև ջրակորուստների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված բազմաթիվ աշխատանքներ: Վերջիններիս հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև:

Քաղաք Երևան


● **Կենտրոն** տեղամասի աշխատակիցների կողմից Մարի Թաղ 3-րդ փողոցում կառուցվել է $D=50$ մմ $L=60$ գծ/մ ընդհանուր երկարությամբ պոլիէթիլենային խողովակներով ջրագիծ, իրականացվել են $D=20$ մմ $L=28$ գծ/մ և $D=25$ մմ $L=10$ գծ/մ երկարությամբ անհատական միացումներ: Կատարված աշխատանքների արդյունքում ավելացել է ջրամատակարարման շարունակականությունը, խնայվել է ջրաքանակ, բարձրացել է ջրագծի շահագործման հուսալիությունը, կրճատվել են շահագործման ծախսերը:

● Տեղամասի կողմից Չարենցի փողոց 115 հասցեում $D=400$ մմ թուջե խողովակի վրա հայտնաբերվել և կարանահպման միջոցով վերացվել է գաղտնի վթար, որի արդյունքում խնայվել է $Q=4$ լ/վ ջրաքանակ:



● **Էրեբունի** տեղամասի սպասարկման տարածքում գտնվող մ. Արարատ, գյուղ Դիտակ, Սևակի փողոցի $d=75$ մմ $L=500$ մ պոլիէթիլենային ջրագիծը գտնվում էր խիստ վթարային վիճակում: Ամբողջովին քայքայված խողովակների վրա հաճախակի տեղի ունեցող վթարները հնարավոր չէր վերացնել պատշաճ կերպով և ժամանակին, ինչպես նաև դրանց պատճառով առաջանում էին ջրակորուստներ, ջրագծերում ճնշման անկումներ և հետագա շահագործման անհնարինություն:

Ջրամատակարարման պատշաճ ապահովման, վթարների բացառման և ջրագծի թողունակության բարձրացման համար «Էրեբունի» շահագործման տեղամասի աշխատակիցների կողմից քայքայված $d=75$ մմ $L=500$ մ պոլիէթիլենային խողովակները շահագործումից հանվել են և նոր հետագծով կառուցվել է $d=75$ մմ $L=400$ մ պոլիէթիլենային խողովակներով ջրագիծ, ինչպես նաև բաժանարար հանգույցում տեղադրվել է $d=100$ մմ փական:



Կատարված աշխատանքների արդյունքում ավելացել է ջրամատակարարման շարունակականությունը, խնայվել է մոտ 3լ/վ ջրաքանակ:

● «Հյուսիս» շահագործման տեղամասի աշխատակիցների կողմից Բակունցի փողոց 7 շենքի D=200մմ կերամիկական կոյուղագծի L=56մ կոյուղագիծը, որը տեղ-տեղ կոտրված էր՝ ստեղծելով հակասանիտարական վիճակ, փոխարինվել է D=300մմ L=30մ երկշերտ ծալքավոր պոլիէթիլենային խողովակներով և կառուցվել է դիտահոր, արդյունքում կոյուղագիծը ներկայումս գործում է անխափան:



● «Հյուսիս» շահագործման տեղամասի աշխատակիցների կողմից Գայի պողոտա 25 հասցեի D=300մմ կերամիկական կոյուղագծի L=30մ հատվածը փոխարինվել է երկշերտ ծալքավոր պոլիէթիլենային խողովակներով:

1.2. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ /ՄԱՐԶԵՐ/

Քաղաք Վանաձոր

● Վանաձոր քաղաքի Զուխաջյան թաղամասի 8 շենքի ջրամատակարարման խողովակը, լինելով կառուցված 1980-ական թվականներին, անհրաժեշտ եղավ փոխարինել D=320մմ L=150մ, խողովակով՝ պարբերաբար կրկնվող վթարներից խուսափելու համար: Հետագա շահագործման բարդություններից խուսափելու արդյունքում տնտեսվել է 1/վ ջրաքանակ:



Զուխաջյան թաղամասի ջրամատակարարման սխեմա

Գաղաք Գյումրի



Բուլվարային թաղամասի ջրամատակարարման սխեմա

● Գյումրի քաղաքի Բուլվարային թաղամասում (Արագած և Վարդ-բաղ միկրոշրջաններ) բազմաթիվ վթարների պատճառով (տեսանելի և թաքնված) թաղամասի ջրամատակարարումը դարձել էր անկառավարելի, քանի որ ընդհանուր թաղամասը սնուցում է 1 պոմպ, որը վթարների պատճառով այլևս չէր կարող պահանջվածից շատ ջուր մատակարարել թաղամաս: Նշված խնդրի պատճառով թաղամասի բարձրահարկ շենքերի վերին հարկերը մասցել էին անջուր:

Գոտիավորման բաժնի աշխատակիցների ջանքերով, և Շիրակ տեղամասի կատարած աշխատանքներով հնարավոր եղավ հայտնաբերել բազմաթիվ վթարներ, որոնք առկա էին շենքերի մուտքագծերի վրա: Նաև ջրամատակարարման ցանցը ուսումնասիրելիս պարզվել է, որ կան ջրագծեր, որոնց շահագործումը նպատակահարմար չէ և կարելի է հանել շահագործումից: Ընդհանուր աշխատանքների արդյունքում (ջրագծերի շահագործումից հանում $D=100$ մ $L=100$ մ, նոր ՊԷ խողովակի կառուցում և ներսրսկում $D=32$ մ Φ Է $L=50$ մ) Բուլվարային թաղամաս մատակարարվող ջրաքանակը 16,5 լ/վ-ից դարձել է 13,5 լ/վ, իսկ ցանցում առկա ճնշումը՝ 2,6 բարի-ից դարձել 3,8 բար:

Քաղաք Սևան

- Նաիրյան փողոցի $D=200$ մ թուջե ջրագծի վրա գոտիավորման աշխատանքների շնորհիվ հայտնաբերվել է $Q=8$ լ/վ վթար, որը վերացվել է տեղամասի կողմից կառուցելով մոտ 5 մետր $D=200$ մ ջրագիծ:



- Նաիրյան 187 փողոցի շենքի $D=50$ մ պողպատե ջրագծի վրա գոտիավորման աշխատանքների շնորհիվ հայտնաբերվել է վթար՝ $Q=6$ լ/վ: Աշխատանքների արդյունքում կառուցվել է $D=50$ մ, $L=9$ մ ջրագիծ:



- Գոտիավորման աշխատանքների շնորհիվ հայտնաբերվել է վթար՝ $Q=4$ լ/վ Սյունաց 29 փողոցի մի քանի տուն սնող $D=50$ մ ջրագցի վրա:

Քաղաք Արարատ

- ք. Վեդիում, Արարատ, Լանջազատ, Նորաշեն, Զող, Սուրենավան, Արևշատ, Նոր-Ուղի գյուղերում իրականացված վթարադրոնողական աշխատանքների և չափումների շրջանականերում հայտնաբերվել և վերացվել է թվով 9 վթար՝ $Q\approx 26$ լ/վ ընդհանուր ջրաքանակով: Որոշ վայրերում շահագործումից հանվել են $D=25-75$ մ տրամագծով $L=230$ մ վթարային և ապօրինի ջրագծեր:



Քաղաք Իջևան

● Քաղաքի Բլբուլյան փ. 75 շենքի բակում իրականացված վթարաորոնողական աշխատանքների շրջանակներում հայտնաբերվել են բազմաթիվ վթարներ և շահագործման ոչ պիտանի ջրագծեր, որոնք և փոխարինվել են D=63մմ պոլիէթիլեն խողովակներով մոտ 140 գծամետր: Արդյունքում տնտեսվել է Q≈8 լ/վ:

Տալուշի մարզ

● «Դիլիջան» շահագործման տեղամասի աշխատակիցների կողմից ք. Դիլիջան, Հովսեփյան փողոց 83 հասցեի D=200մմ կոյուղագծի L=60մ հատվածը փոխարինվել է երկշերտ ծալքավոր պոլիէթիլենային խողովակներով, կառուցվել է նոր դիտահոր և տեղադրվել է երկաթ-բետոնե ծածկ:



Փետրվար ամսվա ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում կատարված աշխատանքները հակիրճ նկարագրվում են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Աշխատանքների հակիրճ նկարագիր

Կատարված աշխատանքները	Չափման միավոր	Քանակ
Չափում հոսքաչափով	տեղ	1287
Որոնում խողովակափնտրիչ սարքով	մ	30,477
Հոսակորուստի որոնում ակվաֆոնով	մ	18,596
Հոսակորուստի որոնում կորեյաստորով	մ	4,910
Ջրաչափական հանգույններ ուսումնասիրություն, սխեմաների կազմում	հատ	36
Շահագործումից հանված ջրագիծ	մ	1,668.7
Կառուցված ջրագիծ	մ	2440.2
Կառուցված կոյուղագիծ	մ	305
Վերացված գաղտնի վթարներ	հատ	32
Փոխարինված փական	հատ	25
Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց	հատ	433
Մաքրված դիտահոր	հատ	424
Գաղտնի վթարների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ	լ/վ	54.2
Վերացված վթարներ	Չափման միավոր	Քանակ
Ջրամատակարարման ցանցում	հատ	836
Ջրահեռացման ցանցում	հատ	2,081
Պոմպակայաններում	հատ	0
Մաքրված անձրևընդունիչ	հատ	0

Փետրվար ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Վերացված վթարների քանակային նկարագիր

	Պոլիէթիլենային խողովակներ (հատ)	Մետաղական խողովակներ (հատ)	Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ
Ընդամենը	385	939	466

1.3. ԶՐԱՉԱՓԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ

Ստորև Աղյուսակ 3-ում ներկայացված է փետրվար ամսվա ընթացքում տեղադրված, փոխարինված կամ սահմանազատման կետեր տեղափոխված տարբեր տրամաչափի ջրաչափերի քանակը:

Աղյուսակ 3. Տեղադրված, փոխարինված, տեղափոխված ջրաչափեր

Կատարված աշխատանքներ	Ջրաչափի տրամագիծ, մմ									
	15	20	25	32	40	50	65	80	100	Ընդամենը
Տեղադրված	187	10	4	5	0	1	0	0	0	207
Փոխարինված	208	30	7	3	1	2	0	0	0	251
Տեղափոխված	0	1	0	0	0	0	0	0	0	1
Տեխ. ակտ	31	7	1	0	0	0	1	1	1	42
Ընդամենը	426	48	12	8	1	3	1	1	1	501

Ընդհանուր առմամբ տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր են տեղափոխվել 15-100 մմ տրամաչափի 501 ջրաչափ: Կատարված աշխատանքների 85,03 %-ը վերաբերել է 15 մմ ջրաչափերին:

1.4. ԶՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Փետրվար ամսվա ընթացքում ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Աշխատանքների հակիճ նկարագիր

h/h	Տեղամասի անվանումը	Գոյուղագծերի լվացում մ	Գոյուղագծերում առաջացած խցանումների բացում հատ	Գոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում գծ/մ
1	Արաբկիր	2481	288	12
2	Մաշտոց	1870	285	30
3	Շահումյան	1765	178	48
4	Զեյթուն	500	176	0
5	Շիրակ	140	364	0
6	Ալավերդի	1370	32	87
7	Ապարան	0	23	0
8	Արթիկ	120	61	0
9	Աշոցք	0	2	0
10	Բերդ	500	7	3
11	Իջևան	745	29	0
12	Լոռի	1865	163	7
13	Նոյեմբերյան	0	17	0
14	Սպիտակ	100	9	0
15	Ստեփանավան	0	15	0
16	Թալին	0	29	0
17	Տաշիր	90	4	0
18	Էջմիածին	0	139	0
19	Չարենցավան	320	68	0
20	Աբովյան	1600	57	0
21	Հրազդան	2240	102	0
22	Աշտարակ	1770	9	0
23	Կենտրոն	0	270	0
24	Հյուսիս	0	211	42
25	Հարավ	0	364	0
26	Էրեբունի	0	175	0
27	Արմավիր	0	110	0
28	Արտաշատ	0	80	0
29	Արարատ	445	73	10
30	Մասիս	0	52	6
31	Գավառ	375	18	0
32	Սևան	370	58	0
33	Մարտունի	0	28	0
34	Վարդենիս	0	12	0

h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի ըվացում	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում
		մ	հատ	գծ/մ
35	Ճամբարակ	0	13	0
36	Դիլիջան	0	38	60
37	Վայք	85	13	0
38	Եղեգնաձոր	20	6	0
39	Ջերմուկ	0	19	0
40	Սիսիան	190	97	0
41	Գորիս	0	17	0
42	Կապան	0	64	0
43	Մեղրի	444	29	0
	Ընդամենը	19405	3804	305

1.5. ԿԵՂՏԱՋՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ ԵՎ ՀԵՌԱՅՈՒՄ

Ընթացիկ ամսում «Կեղտաջրերի մաքրման կայանների և էլ. Սպասարկման» բաժնի ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարավերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել է հետևյալ աշխատանքները.

- **Վարդենիսի կոյուղու մաքրման կայանում** էլ. ենթակայանի բարձր լարման ապահովիչները այրվել էին, որի պատճառով ամբողջ մաքրման կայանը հոսանքազրկվել էր: Վթարվել էր օդամուղը, որի զննման արդյունքում պարզվել է, որ կոտորվել էին ռոտորի ածխե թիակները, որոնք փոխարինվել են և աշխատում են անխափան: Խցանվել էր մանր մասնիկները տեղափոխող ուղղահայաց կոնվեյերը, որը ապամոնտաժվել է և մաքրվել:
- **Ջերմուկի կոյուղու մաքրման կայանում** այրվել էին արտադրական մասնաշենքի լուսարձակները, որոնք փոխարինվել են նոր լուսարձակներով: Կատարվել է նաև բոլոր սարքավորումների զննում և կարգաբերում:



Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե էլեկտրական, թե մեխանիկական), կատարվել են կարգավորումներ:

Աղյուսակ 5. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Գտնվելու վայրը	Կառույցի անվանումը	Մղված կեղտաջրերի ծավալը	Մաքրված կեղտաջրերի ծավալը	Կեղտաջրից առանձնացած կեղտ
			մ ³	մ ³	տ
1	ք. Գավառ	«Գավառ» ԿՄԿ	0	84,401	28,8
2	ք. Մարտունի	«Մարտունի» ԿՄԿ	0	80,270	2728,8
3	ք. Վարդենիս	«Վարդենիս» ԿՄԿ	0	168,185	5,4
4	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» ԿՄԿ	0	147,035	9
5	ք. Դիլիջան	«Դիլիջան» ԿՄԿ	0	115,847	18,9
6	ք. Սևան	«Սևանի» N3 պ/կ	14,542	0	0
7	ք. Սևան	«Սևանի» N5 պ/կ	8,524	0	0
8	ք. Գավառ	«Գավառ» պ/կ	33,090	0	0
9	ք. Վարդենիս	«Վարդենիս» պ/կ	35,700	0	0
10	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» պ/կ	0	0	0

1.6. ԷՆԵՐԳԱՀԱՄԱԿԱՐԳ

Հաշվետու ժամանակահատվածում տարածաշրջանային տնօրինությունների սպասարկման տարածքներում պոմպակայանների վրա իրականացված աշխատանքների ամփոփ տեղեկատվությունը ներկայացվում է Աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6. Պ/կ աշխատանքների ամփոփ նկարագիր

Աշխատանքների նկարագիրը	Կատարված աշխատանքների քանակն ըստ աշխատանքի նկարագրի
Այցերի քանակ	18
Պոմպի աշխատանքի գնում և կարգավորում	127
Էլեկտրական սարքերի գնում	8
Պոմպի վերանորոգում	1

1.7. ՄԵՔԵՆԱ-ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

Փետրվար ամսվա ընթացքում իրականացվել են մեքենամեխանիզմների վերանորոգման լայնածավալ աշխատանքներ, որոնց արդյունքում դրանք կարգաբերվել են և պատրաստ են հետագա շահագործման համար: «Արևելք» ՍՏ կողմից շահագործվող մեքենամեխանիզմների պատշաճ շահագործման համար փետրվար ամսվա ընթացքում նորոգվել են թվով 3 մեքենայի շարժիչներ մասնակի և ընդհանուր, փոխարինվել են հանդարտիչներ, կայծամուներ, ներդիրներ, հղկվել և կարգավորվել են գլխիկները:

Թվով 2 մեքենաների արգելակման համակարգերը նորոգվել են, փոխարինվել են արգելակման սալիկները, խողովակները, վակուումները, սկավառակները և ձեռքի ճոպանները:

Հովացման համակարգի նորոգում է իրականացվել թվով 2 մեքենաների վրա, փոխարինվել են հովացման ռադիատորները, հովացման ռադիատորների կափարիչները, խողովակները, փոկերը և ջրի պոմպերը:

Ընթացքային մասերի նորոգում է իրականացվել թվով 8 մեքենամեխանիզմի վրա, փոխարինվել են գնդավորներ, հողակապեր, էլաստիկ մուֆտեր, հեղուսներ, մանեկներ, դեկի ձգաձողեր, ուղղորդիչ վռաններ, մեղմիչներ, անվակունդի առանցքակալներ, հարվածամեղմիչի զսպանակներ և հարվածամեղմիչներ, կարդանի խաչուկներ, ատամնանիֆներ, առանցքակալներ, կիսասոսիներ, խտաբուկեր, մանեկներ, սատելիտներ:

Մնուցման նորագում է իրականացվել թվով 4 մեքենաների վրա, փոխարինվել են ժիգլորներ, ներդիրներ, ասեղներ, բարձր ճնշման շտուգերներ, լիցքավորման հետադարձ փականներ:

Թվով 13 անվադողեր նորոգվել են, փոխարինվել և հավասարակշռվել են:

Փոխարինվել են թվով 63 մեքենամեխանիզմի շարժիչի, փոխանցման տուփի, հիդրոհամակարգի յուղեր, անդիֆրիզ և գտիչներ:

Թվով 7 մեքենայի մարտկոցները փոխարինվել են նորերով:

Թվով 2 մեքենայի վրա, փոխարինվել են կցորդման սկավառակներ, շաղկապման մեխանիզմներ, անջատող առանցքակալներ և խտաբուկեր:

Թվով 2 մեքենայի վրա իրականացվել են գեներատորի նորոգում, փոխարինվել են ածուխներ, դիողային կամրջակներ, առանցքակալներ և տուլկիներ:

Թվով 11 մեքենայի և էքսկավատորների համար նորոգվել է բարձր ճնշման ռետինե խողովակներ:

Վերանորոգվել են թվով 5 մեքենայի հոսանքի մալուխները, կայծամուներ, կայծամումի լարեր, ռելեներ, վառոցքի բանալիներ:

Թվով 2 մեքենայի մեկնարկիչները նորոգվել են, փոխարինվել են ածուխները, վռանները, փաթույթները և բենդեքսները:

Եռակցման աշխատանքներ են իրականացվել թվով 5 մեքենամեխանիզմի վրա:

Վերոնշյալ աշխատանքների արդյունքում հիմնականում մեքենամեխանիզմներն աշխատում են անխափան, որը նպաստում է ժամանակին վերացնել համակարգում առկա ջրամատակարարման և ջրահեռացման վթարները:



ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ



2.1. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

01.01.2020 թվականին ԵՏՍՍ-ում տեղամասերի թիվին ավելացել է «Թալին» առևտրային տեղամասը ընդհանուր թվով 2020 բաժանորդով, տեղափոխվել է ՄՏՍՍ-ից:

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: 01.02.2020թ. դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել ԵՏՍՍ-ում 334,804, իսկ ՄՏՍՍ-ում՝ 173,324 պայմանագիր. Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	2019թ. փետրվար-2020թ. փետրվար ամիսներին ծառայություններ ստացած բաժանորդների թիվ	Կնքված պայմանագրերի քանակը	%
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	421,032	321,202	76,3
		Իրավաբանական անձ	19,957	13,602	68,2
2	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	182,032	166,900	91,7
		Իրավաբանական անձ	7,108	6,424	90,4
	Ընդամենը	Բնակիչ-բաժանորդ	603,064	488,102	80,94
		Իրավաբանական անձ	27,065	20,026	73,99

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	Բաժանորդների ընդհանուր քանակ	Ծախսող բաժանորդների քանակ	%
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	466,086	369,036	79,2
		Իրավաբանական անձ	23,584	16,487	69,9
2	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	252,296	182,032	72,2
		Իրավաբանական անձ	9,983	7,108	71,2
	Ընդամենը	Բնակիչ-բաժանորդ	718,382	551,068	76,71
		Իրավաբանական անձ	33,567	23,595	70,29

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի վերահսկողական խմբի աշխատակիցների կողմից:

ԵՏՍՍ սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել և տվյալների բազա է մուտքագրվել թվով 487 նոր բաժանորդ, իսկ ՄՏՍՍ սպասարկման տարածքում՝ 144 նոր բաժանորդ: ԵՏՍՍ տեղամասերում փետրվար ամսվա ընթացքում ծառայություններ ստացած բաժանորդների թիվը (այցելությունների թիվը) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ աճել է 31,379 բաժանորդով, ինչը կազմում է մոտ 8,9 տոկոս, իսկ ՄՏՍՍ տեղամասերում աճել է 21,504 բաժանորդով, ինչը կազմում է մոտ 13,6 տոկոս:

2.2. ՀԱՍՈՒՅԹ


Սպառման ծավալների ավելացման նպատակով շարունակվում են կասկածելի սպառման ծավալներ ունեցող իրավաբանական անձ հանդիսացող, ինչպես նաև ԵՏՍՍ-ի և ՄՏՍՍ-ի «Լոռի», «Շիրակ», «Սևան» տեղամասերի սպասարկման տարածքների բնակիչ-բաժանորդների ջրաչափերի փոխարինման աշխատանքները: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր՝ բարձրակազ և ավելի զգայուն ջրաչափերով:

Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը:


Բոլոր փոխարինված ջրաչափերն ուղարկվում են պարտադիր լաբորատոր ստուգաչափման: Փետրվար ամսվա ընթացքում ԵՏՍՍ-ում ստուգաչափվել է 4,089, իսկ ՄՏՍՍ-ում՝ 1133 ջրաչափ:

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	Սարքին	Անսարք	Միջամտած	Ստուգաչափված ջրաչափերի քանակ առ 02.2020
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	2,930	881	129	3,940
		Իրավաբանական անձ	79	62	8	149
2	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	374	589	74	1037
		Իրավաբանական անձ	34	56	6	96
	Ընդամենը		3,417	1,588	217	5,222

Ստուգաչափված ջրաչափ (Երևան)



Ստուգաչափված ջրաչափ (Մարզեր)




Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասն ունի խնդիրներ: ԵՏՍՍ-ում փետրվար ամսվա ընթացքում փոխարինված 4089 ջրաչափերի մոտ 26 տոկոսը անսարք է կամ առկա է արտաքին միջամտություն, իսկ ՄՏՍՍ-ում փոխարինված 1133 ջրաչափերի մոտ 64 տոկոսը անսարք է կամ առկա է արտաքին միջամտություն: Միջամտած ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:

Ընթացիկ ամսում լաբորատոր ստուգաչափման արդյունքում, անսարք և միջամտած ջրաչափերից կազմված արձանագրությունների հիման վրա բաժանորդների տվյալների բազա է մուտքագրվել ԵՏՍՍ-ի մասով 9,674 մ³, իսկ ՄՏՍՍ-ի՝ 71,624 մ³ վերահաշվարկված հատույթ (13.51 % Երևան և 86.49 % մարզեր):

Ստորև՝ գրաֆիկային տեսքով, բերված են 2020թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ.

Հատույթ (Երևան)



Հասույթ (Մարզեր)



2.3 ԳԱՆՁՈՒՄ

Գանձման բարձր մակարդակ ապահովելու համար անհրաժեշտ է ունենալ ճիշտ ձևավորված հասույթ: Փետրվար ամսին գանձումը ԵՏՍՍ-ում կազմել է 1293,504 մլն դրամ, իսկ ՄՏՍՍ-ում՝ 386,376 մլն ՀՀ դրամ:

Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարումներն ապահովելու նպատակով ընկերությունում կիրառվում են բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ՝ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր՝ փոստային առաքում, ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն: Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով հնարավորության դեպքում իրականացվում են պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ՝ մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը:

2.4 ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ / ԻՍՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ/

Առևտրային տնօրինությունների աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը՝ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով: Փետրվար ամսվա ընթացքում ԵՏՍՍ կողմից կնքվել է թվով 121 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 12.5 մլն ՀՀ դրամ ընդհանուր գումարով, իսկ ՄՏՍՍ կողմից՝ թվով 73 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 6.8 մլն ՀՀ դրամ ընդհանուր գումարով:

Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում են դեբիտորական պարտքերի չափը, և պարտատերերի ցուցակները ներկայացվում են իրավաբանական վարչություն:

Դեբիտորական պարտքերի վերաբերյալ բաժանորդներին պարբերաբար ուղարկվում են հիշեցումներ (փոստային ծանուցում): Գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հիշեցում ստացած, բայց վճարում չկատարած բաժանորդների հետ տարվում են անհատական աշխատանքներ: Անհրաժեշտության դեպքում իրենց պայմանագրային պարտավորությունները չկատարող բաժանորդների ջրամատակարարումը դադարեցվում է կամ պարտքերի գանձմանը տրվում է իրավական ընթացք:

Փետրվար ամսվա ընթացքում «Վեոլիա Ջուր» ընկերության կողմից ներկայացված 10 000 000 ՀՀ դրամից բարձր բռնագանձման գործեր: Խոսքը վերաբերում է մասնավորապես հետևյալ ընկերություններին:

Հ/Հ	Պատասխանող	Հայցի առարկան /հայցապահանջը, հայցագիրը/, ՀՀ դրամ
1	«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ	14.897.386
2	Ազատաշեն համայնք	12.511.000
3	«Էլիտ Սերվիս» ՍՊԸ	11.440.944
4	«Նոր Հաճն» ՀՈԱԿ	114.597.534
5	«Արտաշատի տրիկոտաժի Ֆաբրիկա» ԲԲԸ	14.009.047
	Ընդամենը	167.455.911

Առ այսօր պարտքերի մարման վերաբերյալ կնքված ժամանակացույցերի քանակը կազմում է 3387 հատ, իսկ պարտքերից ակնկալվող գումարը կազմում է 2.680.006,883 ՀՀ դրամ:


Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տարածաշրջան	Պարտքը 01.03.2020թ. դրությամբ (մլն. դրամ)	Այդ թվում փետրվար ամսվա հասույթ (մլն.դրամ)
Երևանի տարածաշրջան, այդ թվում	3,987.4	1,220.4
Բնակիչ-բաժանորդներ	2,919.7	819.7
Իրավաբանական անձեր	1,067.7	400.7
Մարզերի տարածաշրջան, այդ թվում	1,767.6	385.4
Բնակիչ-բաժանորդներ	1,319.3	283.9
Իրավաբանական անձեր	448.3	101.5
Ընդամենը, այդ թվում	11.510	3211.6
Բնակիչ-բաժանորդներ	4239.0	1103.6
Իրավաբանական անձեր	1516.0	502.2


Հարկ է նշել, որ մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չեն առնված բաժանորդների՝ նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:

ԵՏՍՏ սպասարկման տարածքում շուրջ 181.2 մլն ՀՀ դրամը կուտակվել է երկու բաժանորդներին մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց մեծածախ սակագնով պարբերաբար չվճարելու պատճառով. Դրանք են՝ «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ը և «ՀՀ Արարատի մարզի Ազատաշեն» համայնքը:

2020 թ. դեբիտորական պարտքերի շարժը, մլն.դրամ (Երևան)



2020 թ. դեբիտորական պարտքերի շարժը, մլն.դրամ (Մարզեր)



2.5 ՁՐԱՀԱՓԵՐ

Բաժանորդների տվյալների բազայում 01.03.2020 թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակում.

Տարածաշրջան	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Բրավաբանական		
		Ընդամենը	Այդ թվում ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում ծախսող	%
Երևան	Ջրաչափով	452,374	367,924	81.3	22,899	16,482	72.0
	Առանց ջրաչափի	13,712	1,112	8.1	685	5	0.7
Մարզեր	Ջրաչափով	231,606	166,542	71.91	9,636	6,513	67.59
	Առանց ջրաչափի	21,310	1,301	6.11	242	2	0.83
Ընդամենը	Ջրաչափով	683,980	534,466	78.14	32,535	22,995	70.68
	Առանց ջրաչափի	35,022	2,413	6.89	927	7	0.76

Տվյալների բազայում 01.03.2020թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տարածաշրջան	Բնակիչ-բաժանորդներ			Բրավաբանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%
Երևան	591,496	295,544	49.97	25,748	7,098	27.57
Մարզեր	264,437	71,573	27.07	10,732	1,915	17.84
Ընդամենը	855,933	367,117	42.89	36,480	9,013	24.71

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:

Հաշվետու ամսվա ընթացքում Երևանում տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) շուրջ 4576, իսկ մարզերում՝ 1365 ջրաչափական սարք: Այդ թվում՝ ԵՏՍՍ սպասարկման տարածքում նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 69, իսկ ՄՏՍՍ սպասարկման տարածքում՝ 314 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա:

Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճշգրիտ հաշվառմանը:

ԵՏՍՍ սպասարկման տարածքում ՊԿԱԾ տեղադրված ջրաչափեր

Հասցե	Ջրաչափերի ընդհանուր քանակ	Տեղադրված ջրաչափերի քանակ	%
գ.Քասախ	2289	1855	81.0
գ.Պոռչյան	1537	1010	65.7
ք.Հրազդան, միկրոշրջան թաղ.	5742	1686	29.4

«Լոռի» տեղամասում ընկերության վարչական և տեխնիկական տնօրինությունների հետ համատեղ իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիր:

Փետրվար ամսին ջրաչափերի փոխարինման աշխատանքները շարունակվել են Լոռի, Շիրակ, Գորիս, Կապան, Սիսիան, Արարատ և Արտաշատ տեղամասերի սպասարկման տարածքներում: Առկա անսարք և փոխարինման ենթակա ջրաչափերից արդեն փոխարինվել է Լոռի տեղամասի սպասարկման տարածքի տարբեր հասցեներում՝ 6,758, Շիրակ տեղամասի սպասարկման տարածքում՝ 4,328, Գորիս տեղամասի սպասարկման տարածքում՝ 677, Կապան տեղամասի սպասարկման տարածքում՝ 1202, Սիսիան տեղամասի սպասարկման տարածքում՝ 683, Արարատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 669 և Արտաշատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 742 ջրաչափական սարք:

2.6 ԱՊՕՐԻՆԻ ՄԻԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՑՈՒՄ

Շարունակվում են ապօրինի միացումների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Ապօրինությունների հայտնաբերման արդյունքում կազմված արձանագրությունները «Ինտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, հասցեները փոխանցվում են տարածաշրջանի տնօրինությանը՝ ջրագրկում իրականացնելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա հաշվարկված ջրածախսերի և դրա դիմաց կատարված վճարումների տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:

Տարածաշրջան	Քանակ	Խ.մ.	Գումար (դրամ)
Երևան	112	54,225	9,252,770
Մարզեր	86	15,842	2,719,243
Ընդամենը	198	70,067	11,972,013

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ




3.1. ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված է Երևան քաղաքի փետրվար ամսվա (15-ի դրությամբ) շարունակականության տվյալը՝ 98.2 %, ինչը նույնն է՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշի համեմատ:


Շարունակում է գործել ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման գրաֆիկը, որը համաձայնեցվել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:

Ջրամատակարարման շարունակականություն




Հաշվետու ամսվա ընթացքում շարունակականության և մոնիթորինգի խմբի կողմից ՇՏ-ներում կարգաբերվել են 40 ՃԿՊ-ներ:

Ստորև ներկայացված են որոշ կարգաբերված ՃԿՓ-ների վրա տեղադրված ձնշման լուգերների գրաֆիկները.





Նոր Նորքի 4-րդ զանգվածի ՃԿՓ-ի վերանորոգման ընթացքում պարզվել է, որ ջրաքանակի հետ քարերի և փայտի մնացորդները խոչընդոտում են ՃԿՓ-ի կանոնավոր աշխատանքին:




Հաշվետու ամսվա ընթացքում գոտիներում ջրաքանակների ուսումնասիրության և հոսակորուստների հայտնաբերման համար 8 հասցեներում տեղադրվել են Seba UDM-200 տիպի հոսքաչափեր:

Ստորև ներկայացված են տեղադրված հոսքաչափերի հասցեները և կորուստներ ունեցող գոտիների գրաֆիկները.

Հ/Հ	Մասնաճյուղ	ՇՏ	Հոսքաչափի տեղադրման հասցեն
1	Արևմուտք	Արաբկիր	Նոր Գեղի Պ/Կ
2	Արևմուտք	Մաշտոց	16 Թաղամաս, Բեկնազարյան փ.
3	Արևելք	Հյուսիս	Նոր Նորք 2-րդ զանգված
4	Արևելք	Շենգավիթ	Արագած փ. սկզբնամաս
5	Արևելք	Շենգավիթ	Արագած փ.- Մայիսի 9 փ. խաչմերուկ
6	Արևելք	Կենտրոն	Վարդանանց փ.
7	Արևելք	Կենտրոն	Ալեք Մանուկյան փ.




Երևան քաղաքը սնող ջրատարների ինքնահոս ջրաքանակը 2020թ-ի փետրվար ամսին, 2019թ-ի նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 199 լ/վ-ով, ինչի արդյունքում այդ նույն ջրաղբյուրներում ջրարտադրության համար հոսանքի ծախսն ավելացել է 248 հազար կՎտ-ով, ինչը երևում է ստորև ներկայացված գրաֆիկում:



3.2. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում էլ. էներգիայի ծախսը Երևան քաղաքում նվազել է 3075 ԿՎտ.ժ. (0,61%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Երևան քաղաքի բակային պոմպեր ԱՌԱՆՑ ԽԱՐԲԵՐԴԻ ՊՈՍՊԱԿԱՅԱՆԻ*




Մեծ ուշադրություն է հատկացվել նոր տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների ծախսերին՝ ոչ միայն խախտումների կանխման, այլև ծախսի ժամային գրաֆիկների վերլուծության միջոցով յուրաքանչյուր պոմպի շահագործման խնդիրների հայտնաբերման նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է թվով 210 հասցե, և դրանցից 2 հասցեում հայտնաբերվել և վերացվել են թերություններ:

Թվով 9 հասցեում հայտնաբերվել են հավելյալ գումարներ, որոնց մասին տեղեկացվել է ՀԷՏ ՓԲԸ-ի համապատասխան ծառայություններին՝ թերությունները վերացնելու համար: Թվով 4 հասցեում ապամոնտաժվել են լարանցումներ, որոնց հետագիծը հնարավոր չէր պարզել, 1 հասցեում կատարվել է հաշվարկային սարքի վերականգնում, ևս 1 հասցեում փոխվել է հետադարձ փականը, և 2 հասցեում վերացվել է առաջացած վթարը:

● Էջմիածին քաղաքում տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների և իրականացրած վերահսկողության արդյունքում էլ. էներգիայի ծախսը նվազել է 2959,40 ԿՎտ.ժ կամ 11,6% անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Էջմիածին



Կատարված աշխատանքներ


Հ/Հ	Անվանում	Կատարված աշխատանքներ
1	Ճամբարակի խ/հ	վերականգնվել է բարձր լարման բաժանիչը
2	Մհուր ՕԿՁ	վերականգնվել է բարձր լարման բաժանիչը
3	Լճաշենի խ/հ	փոխարինվել է այրված տրանսֆորմատորը
4	Ապարան ք/կ	փոխարինվել է այրված տրանսֆորմատորը

Չորս հասցեներում առաջացած թերությունները վերացվել են:

Ինվերտորների տեղադրում

● Թվով 10 պնևմատիկ համակարգեր փոխարինվել են ինվերտորային համակարգով, էլ. էներգիայի ծախսը նվազել է 103,12 ԿՎտ/ժամ (1%) անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:


Տեղադրված ինվերտորների սպառած էլ. էներգիա



Հաշվետու ժամանակահատվածում 12 խոշոր պոմպակայաններում էլ. մատակարարման խափանումներն օպերատիվ կերպով շտկվել են, իսկ առաջացած թերությունները հայտնաբերվել և վերացվել:


● Փետրվար ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսն ավելացել է 251,134 ԿՎտ.ժ կամ 41,99% (անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ):

Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա




● Մարզերի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսը նվազել է 7,690 ԿՎտ.ժ կամ 0,41 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա



● Ընդհանուր էլեկտրաէներգիայի ծախսն ավելացել է 223,422 ԿՎտ.ժ կամ 6,17 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլ. էներգիա



3.3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

● Ստորև աղյուսակում ներկայացնում են փետրվար ամսվա ընթացքում աշխարհագրական տեղեկատվական համակարգում կատարված աշխատանքները.

Աշխատանքի անվանում	Չ/Մ	Քանակ
«Ինտերակտիվ» համակարգում ֆիզիկական բաժանորդների տեղադիրքի ճշտում	հատ	324
«Ինտերակտիվ» համակարգում իրավաբանական բաժանորդների տեղադիրքի ճշտում	հատ	35
Նոր կետերի ավելացում՝ ֆիզիկական բաժանորդներ	հատ	276
Նոր կետերի ավելացում՝ իրավաբանական բաժանորդներ	հատ	38
Տեխնիկական պայմանների թվայնացում	հատ	33
Կառուցված ջրագծեր	մետր	256.5
Շահագործումից հանված ջրագծեր	մետր	1046.0
Կառուցված կոյուղագծեր	մետր	250.5
ՀՀ-ում ՕԿՁ-րի տվյալների բազայի ստեղծում ԱՏՀ-ում	հատ	1
ՀՀ-ում տեղադրված պոմպակայանների տվյալների բազայի ստեղծում ԱՏՀ-ում	հատ	1
Երևանի մայր ջրատարների տվյալների բազայի ստեղծում հիդրավլիկ մոդելավորման համար	հատ	1

Շահագործման տեղամասերի ինժեներների կողմից ներկայացրած ջրամատակարարման և կոյուղատար ցանցում կատարած աշխատանքների համակարգում, համապատասխան գծագրերի կազմում և մուտքագրում ԱՏ համակարգ:

Տեղամաս	Շահագործումից հանված ջրագիծ (մ)	Կառուցված ջրագիծ (մ)	Շահագործումից հանված կոյուղագիծ (մ)	Կառուցված կոյուղագիծ (մ)
Կենտրոն	830	70		
Հյուսիս				55
Շենգավիթ		104		
Արաբկիր	94	33		30
Մաշտոց	107	32		138
Շահումյան	15	17,5		3,5
Զեյթուն				24

3.4. ՋՐԱՏԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Արգական-Խարբերդ

Ջրատար կատարած շրջայցի ժամանակ հայտնաբերվել է վթար՝ 10լ/վ, որը վերացվել է Շենգավիթ տեղամասի ուժերով:



Գառնի-Արտաշատ

Ղազարավանի խորքային հորերի ջրատարի վրա հայտնաբերվել է վթար ≈ 10 լ/վ: Այն Ջրատարերի շրջայցի ժամանակ հայտնաբերվել են վթարներ 10լ/վ, որոնք մասամբ վերացվել են Արտաշատ և Արարատ ՇՏ-ների կողմից:

Գառնի-Երևան.

Ջրատարի վրա՝ Նուբարաշենից Արին-Բերդ ՕԿՋ հատվածում, հայտնաբերվել են վթարներ՝ գումարային 15լ/վ: Դրանց մեծ մասը վերացվել են, մյուսները կբարելավվեն եղանակային պայմանների բարելավման դեպքում: Փետրվարի 20-ին Գառնի ջրատարի Նուբարաշենից Արին-Բերդ հատվածում առաջացել էր վթար՝ ≈ 150 լ/վ, որի վերանորոգման համար պահանջվել է կանգառ:

Գ ա ո ռ ի - Ն ո Ւ Բ ա Ր ա շ յ յ - Խարբերդ ջրատարի վրա հայտնաբերվել են վթարներ, որոնք վերացվել են:




Արզնի 2

Ջրատար կատարած շրջայցի ժամանակ Քանաքեռավանի ձորում հայտնաբերվել են վթարներ և վթարված միացումներ: Դրանք վերացվել են:



Ապարան

Ջրատարից Երզնկա գյուղի միացման վրա հայտնաբերվել են վթարներ և վթարված միացումներ, որոնց մեծ մասը վերացվել են ՇՏ-ների կողմից:



Ամբեր-Ծաղկալանջ

Ջրատարի վրա կատարված չափումների ընթացքում հայտնաբերվել են միացումներ, վթարված ջրթող փական և գաղտնի վթար, որոնք վերացվել են ՇՏ-ի կողմից:

ՋՀԿ բաժնի կողմից իրականացվել են նաև ջրաքանակի կարգավորման հետ կապված մի շարք աշխատանքներ:



ԼՐԱՏՎԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



Հաշվետու ամիսը Վեոլիա Ջուր ընկերության գործունեության լուսաբանման առումով Հանրային կապերի բաժնի /ՀԿԲ/ համար լարված, բայց առանց արտակարգ պատահարների աշխատանքի ժամանակաշրջան էր:

Այդ ընթացքում գարնանից սկսվող ինտենսիվ ջրաշինարարությունից առաջ ընկերությունում նոր ծրագրեր էին կազմվում, խնդիրները հստակեցվում, ինչպես նաև վերջին ամիսների արդյունքներն ավտոմատ: Վերջին հանգամանքով պայմանավորված, ընկերության տնօրինությունը բարձր գնահատական է տվել «Արտաշատ» և «Հրազդան» շահագործման տեղամասերի աշխատանքին, որոնց մի շարք աշխատակիցներ արժանացել են դրամական պարգևի: Բնականաբար, ՀԿԲ-ն անմիջապես արձագանքել է նորությանը պարզաբանմամբ և լուսանկարաշարով:

Ընդ որում, եթե «Արտաշատ» տեղամասի դեպքում խոսքը գուտ շինարարության մասին է եղել, ապա «Հրազդանի» մասնագետները ուղղակի հրաշալի են գործել կորոնավիրուսի տարածման վտանգով ստեղծված բարդ իրավիճակում: Նրանք երեք օր ու գիշեր լարված աշխատելով նոր ջրագիծ են կառուցել Ծաղկաձորի «Գոլդեն Փելես» հյուրանոցի համար, որտեղ մեկուսացվածներ կան:



Իսկ հաշվետու ամսվա առանձնահատկությունը ՀԿԲ-ի որոշակի հետևողականությունն է համակարգում նկատված և բնակիչների բողոքներին տեղիք տված խնդիրների լուծման ընթացքի լուսաբանման գործում: Կարելի է այդպիսի 3 թեմա առանձնացնել, երբ հանրությունը պատկերավոր ասած գրեթե անցանց ռեժիմով հետևել է դեպքերի ընթացքին:

Առաջինը Կապան քաղաքի այն մի քանի թաղամասերում շինարարությունն է, որտեղից մշտապես բողոքներ են հնչել անբավարար ջրամատակարարումից: Վեոլիա Ջուր ընկերությունը առկա խնդիրների լուծման համար համապատասխան ծրագրեր է մշակել, որոնց իրականացման ընթացքը 2 անգամ նկարագրվել է: Նույնը կարելի է ասել Արարատի մարզի Ջող ավանում խցանուժների մասին բողոքների կապակցությամբ: Խնդրի առաջացման պատճառներին, դրանց լուծման աշխատանքների ընթացքին նվիրված է եղել 3 հրապարակում: Ավելին, թեմային մեր կողմից անդրադարձել է «Արմենիա» հեռուստատեսությունը, որը ցույց է տվել կոյուղու խցանված վիճակը, որպես հետևանք դրա տեխնիկական մաշվածության ու բնակիչների կողմից որպես աղբատար ծառայեցնելուն: Ի վերջո, Սևան քաղաքի ջրամատակարարման ընդհատուժները, որը հետևանք էր «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից էլեկտրաէներգիայի մատակարարման պարբերաբար դադարեցման անբարենպաստ եղանակներով պայմանավորված, ինչը խափանում էր մեր պոմպակայանի աշխատանքը և անջատում քաղաքի ջրամատակարարումը: Մոտ 10 օրում մենք 3 անգամ անդրադարձել ենք խնդրին, փորձելով ցույց տալ, որ մեղավորությունը Վեոլիա Ջուր ՓԲԸ-ին չէ:

Ընդհանրապես, տարատեսակ աշխատանքներ լուսաբանելիս, մենք ձգտել ենք հրապարակումները դարձնել համոզիչ ու հասկանալի հանրության համար, որով պայմանավորված որոշ դեպքերում զգալի ուշադրություն է դարձվել հարցի տեխնիկական կողմին: Օրինակ, դա վերաբերում է Գառնի-Երևան կարևորագույն ջրատարի վթարին, որի պատճառող մշտապես ջրագրկվում է Երևանի մոտ ¼-ը: Բնականաբար, այդ տասնյակ հազարավոր բաժանորդներին պատճառովող անհանգստությունը ինչ-որ բացատրություն պետք է ունենա, դրա համար էլ մենք հայտարարությունից, լուսանկարներից ու տեսանյութից բացի, հրապարակել ենք խոդովակաշարի, լեռնային տեղանքի ու վթարի պատճառների մասին համապատասխան տվյալներ: Նման մոտեցումը որպես կանոն իրեն արդարացնում է և հանգեցնում բողոքի ալիքի նվազեցմանը:

Նույն մոտեցումը կիրառվեց փետրվարին, երբ անձյուն ձմռան վերջում հանկարծակի վերադարձած սառնամանիքները բարձր լեռնային շրջաններում սառեցրին որոշ աղբյուրներ ու դժվարություններ ստեղծեցին ջրամատակարարման հարցում: ՀԿԲ-ն նախ քանիցս անդրադարձավ խնդրին, այնուհետև հրապարակեց ՀՀ ԱԻՆ-ի հաղորդագրությունը Թալինի տարածաշրջանում բուք ու բորանի մասին, որի պատճառով մթության մեջ մոլորվել էր անգամ փրկարարների խումբը, որը ուղեկցում էր Վեոլիա Ջրի վթարային բրիգադին դեպի լեռնային աղբյուրներ: Ի վերջո, մենք լուսանկարներ հրապարակեցինք, թե ինչպես են համակարգի ավտոցիստներով ջուր մատակարարում որոշ գյուղերի բնակիչների:

Այս ընթացքում նաև շարունակվել է լուսաբանվել տարվող շինարարական աշխատանքների ընթացքը, մասնավորապես շրջանցիկ ջրատարի կառուցումը Շոր-շոր ջրաղբյուրում, որի շնորհիվ կբարելավվի Աշտարակի ջրամատակարարումը: Անդրադարձ է կատարվել նաև Արարատի ու Արմավիրի մարզերում աշխատանքներին, որտեղ եղանակային պայմանները թույլ են տվել սկսել ծրագրերի իրականացումը:

Մյուս ամիսների նման, փետրվարին հրապարակվել են հաղորդագրություններ ջրանջատումների ու հայտարարված մրցույթների մասին:

Այս բոլորի հիմնական մասն ապահովվել է ֆեյսբուք սոցիալական ցանցի ընկերության էջում, բայց որոշ հարցերի վերաբերյալ մամուլի հաղորդագրություններ ուղարկվել են ԶԼՄ-ներին, ինչպես նաև իրենց տեղը գտել պաշտոնական կայքում:

ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



5.1 ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

● ՈԱԱ Ծառայությունը, ղեկավարվելով «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի պահանջներով, մշակեց 2020 թվականին նախատեսվող Ընկերության կողմից փաստացի շահագործվող և ՀՀ ԱԲՆ ԱՎՕ-ների ռեեստրում գրանցված թվով 143 ԱՎՕ-ի տեխնիկականության փորձաքննության աշխատանքների (ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ) պլան ժամանակացույցը, որը ներկայացվեց Ընկերության համար պայմանագրային հիմունքներով ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ իրականացնող հավատարմագրված փորձագետներին:

● Ընկերության օբյեկտներում իրականացված ստուգայցների շրջանակներում կազմվեցին Ռիսկերի գնահատման և դրանց մեղմացման ուղղված միջոցառումների վերաբերյալ զեկույցներ, ստուգաթերթիկներ (տես 5.3 բաժնում զետեղված տեղեկատվությունը):

5.2 ԴԱՍԸՆԹԱՅՆԵՐ/ՄԵՄԻՆԱԸՆԵՐ

● Հիմք ընդունելով Ընկերության գլխավոր տնօրենի 11/02/2020


թվականի 616 Ա և 617 Ա հրամանները, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 254-րդ հոդվածի պահանջները և առաջնորդվելով Ընկերությունում անվտանգության մշակույթի ձևավորման և պահպանման տեսլականով, Ծառայությունը սույն թվականի փետրվարի 13-ին և 14-ին Ընկերության «Արևելք» և «Արևմուտք» ՏՏ-ների թվով 35 աշխատողի համար կազմակերպեց և իրականացրեց «Աշխատատեղում անվտանգության՝ մասնավորապես Էրգոնոմիկայի հետ կապված ռիսկերը, ավտոտրանսպորտային միջոցների անվտանգ շահագործման սկզբունքները» և «Առաջին օգնություն ցուցաբերելու եղանակները» դասընթացները:



● ՈԱԱ Ծառայությունը, ղեկավարվելով ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 254-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 28/08/2003թվականի 1228-Ն որոշմամբ հաստատված «Ջրահեռացման համակարգերի օգտագործման և հեռացվող ջրերի մաքրման կանոնների» 68-րդ և 77-րդ կետերի և ՎԵՈԼԻԱ ԳԴՈՒՊԻ «Աշխատանքներ փակ տարածքներում» Բարձր ռիսկերի կառավարման ստանդարտի պահանջներով, Ընկերության «Արևելք» ՏՏ-ի «Ջերմուկ» ԿՄԿ-ի շահագործող անձնակազմի համար կազմակերպեց «Փակ տարածքներում աշխատանքներին ներկայացվող անվտանգության պահանջները» 3 մոդուլից բաղկացած կոմպլեքս դասընթաց և գիտելիքների ստուգում: Դասընթացի ավարտին տեղամասերին հատկացվեց մեկական գազաանալիզատոր և ձեռքի նմուշառման զոնդ:


2020թ. Դասընթացների մասնակիցների քանակն ըստ դասընթացների տիպի

Մասնագիտական որակավորման և կատարողականության բարելավման դասընթացներ




Անվտանգության դասընթացներ

2019-2020թթ. կազմակերպված դասընթացներին/թեստավորումներին (ԴԱՍԸՆԹԱՑ) մասնակցած աշխատակիցների քանակների համեմատական գրաֆիկ



5.3 ՌԻՍԿԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ/ՄԵՂՄԱՅՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ

● Ծառայության անվտանգության պատասխանատուներն իրականացրեցին Անվտանգության ստուգայցեր Ընկերության ՀՏԿ-ներում (ՕԿՁ, քլորակայան, պոմպակայան, ՋՄԿ, ԿՄԿ) և կառուցվածքային ստորաբաժանումների գրասենյակներում: Ստուգայցերի նպատակն էր իրականացնել համապատասխանաբար մասնագիտական և էրգոնոմիկայի հետ կապված ռիսկերի գնահատում և մեղմանցնող/կանխարգելող միջոցառումների կիրառում: Այս շրջանակներում ուսումնասիրվել են նաև ՀՏԿ-ները շահագործող անձնակազմերի կողմից Ընկերությունում հաստատված անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակը և տրվել մասնագիտական ցուցումներ:



ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑ ԵՎ
ՍԵՐՎԵՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

6.1. Համակարգչային ցանց

Փետրվար ամսվա ընթացքում համակարգչային մասնագետների կողմից իրականացված հիմնական աշխատանքների ցանկը ներկայացված է ստորև

- Մեկնարկել է veolia.am էլ. նամակագրության կասեցված հասցեների վերանայում՝ այդ հասցեների հեռացման նպատակով:

- HP կազմակերպության մասնագետների հետ համատեղ մեկնարկել է սերվերների և տվյալների պահոցի SSD հիշողության կրիչների ստուգման գործընթացը: Այդ գործընթացը պայմանավորված է HP կազմակերպության SSD հիշողության կրիչների հայտնի խնդրի հետ, որի հետևանքով այդ կրիչները պիտանի չեն օգտագործման՝ նախատեսված ժամանակից վաղ:

- IUNetworks ընկերության մասնագետների հետ համատեղ հայտնաբերվել և շտկվել են մի շարք խնդիրներ՝ Նոր Զանգերի Կենտրոնի ծրագրային ապահովման հետ կապված:

- Վերջնական տեսք են ստացել IUNetworks ընկերության Նոր Զանգերի Կենտրոնի ծրագրային ապահովման օգտատերերի մուտքային տվյալները:

- Իրականացվել են հակավիրուսային կառավարման քաղաքականությունների փոփոխություններ՝
 - ▶ ավելացվել են Հայկական Ծրագրեր՝ ծրագրային ապահովման թարմացումների իրագործման համար,
 - ▶ ավելացվել են հայտնի՝ վտանգավոր ծրագրային ապահովման կասեցման համար անհրաժեշտ քաղաքականություններ:

- Մեկնարկել է COP2020 ինդուստրիալ ցանցերի և համակարգերի աուդիտ ծրագիրը:

- Աշտարակ տեղամասում մոնտաժվել է և տրվել շահագործման VoLP հեռախոսագծային ցանց:

- Ապամոնտաժվել են Շիրակի 94 հասցեի բակային տարածքներում տեղադրված տեսահսկման համակարգի տեսախցիկները:

- Մոնտաժվել և տրվել են շահագործման տեսահսկման համակարգեր Շիրակի 94 հասցեի Ջրաչափերի ստուգաչափման լաբորատորիայում և Ֆուչիկի 1/3 հասցեում:

6.2. Ինտերակտիվ համակարգ

Փետրվար ամսին կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Ջրաչափերի փոխարինման միասնական հարթակ ծրագրային ապահովման մեջ մի շարք թարմացումներ և փոփոխություններ են իրականացվել՝ կապված գործընթացի ավտոմատիզացման, և նոր ի հայտ եկած խնդիրների դեմ:

- Մի շարք թարմացումներ և փոփոխություններ են իրականացվել ՀՕԿՀ-ի 378Ն որոշման փոփոխությունների հետ կապված՝ մասնավորապես կնիքների առկայության, ծանուցումների և ժամկետների, սակագնի, ձևաչափերի և այլն:

- Ակտեր:

Ինտերակտիվ համակարգի միջոցով՝ ապօրինությունների դեմ պայքարի ամբողջ գործընթացը համակարգվում է, ուստի ստորև ներկայացվում է փետրվար ամսվա ապօրինությունների դեմ պայքարի ցուցանիշները.

Խախտման արձանագրություն			
Տեղամաս	Շնչամեք		
	քանակ	հազ խ/մ	մլն դրան
Հյուսիս	1	1.10	0.20
Էրեբունի	7	3.97	0.70
Շենգավիթ	3	1.03	0.17
Արարիկ	6	1.93	0.33
Մաշոց	1	0.52	0.08
Շահումյան	4	1.53	0.24
ԶԿԲ	32	19.69	3.38
Շիրակ	1	0.52	0.09
Արթիկ	2	0.79	0.14
Արարատ	7	0.52	0.09
Հրազդան	5	1.76	0.32
Արտաշատ	6	0.75	0.12
Գավառ	8	1.37	0.25
Գորիս	1	0.26	0.05
Էջմիածին	6	2.07	0.34
Թալին	1	0.26	0.05
Իջևան	6	0.58	0.10
Կապան	1	0.26	0.05
Մասիս	1	0.52	0.08
Արմավիր	3	2.32	0.41
Աշտարակ	4	0.54	0.08
Սյիտակ	3	0.32	0.05
Շնչամեք	109	42.60	7.32

● Լաբորատոր փորձաքննություններ (ջրաչափերի ապահավաքակցման գործառույթներ)

Ապահավաքակցման և լաբորատոր փորձաքննությունների եզրակացությունների ամբողջ գործառույթները համակարգվում է ինտերակտիվ համակարգի միջոցով, ուստի ստորև ներկայացվում է փետրվար ամսվա լաբորատոր եզրակացությունների ցուցանիշները.

Լաբորատորիա				
Տեղամաս	Միջամտություն		Անսարքություն	
	քանակ	հազ. խ/մ	քանակ	հազ. խ/մ
Հրախիս	5	1.21	34	0.40
Էրեբունի	2	1.03	13	0.15
Շենգավիթ	2	0.44	24	0.28
Արաբկիր	3	0.44	30	0.28
Քանաքեռ-Զեյթուն	0	0	18	0.28
ԽՈՇՈՐ	0	0	1	0.03
Շիրակ	0	0	3	0.01
Արարատ	0	0	1	0.00
Արմավյան	3	0.33	0	-
Հրազդան	2	0.26	5	0.03
Աշոցք	0	-	2	0.01
Գավառ	0	-	4	0.03
Դիլիջան	0	-	1	0.01
Էջմիածին	2	0.75	13	0.12
Ճամբարակ	0	-	5	0.03
Մասիս	1	0.18	5	0.14
Արմավիր	0	-	21	2.54
Զարենցավան	2	0.45	24	0.08
Միսիան	1	0.26	11	0.12
Ընդամենը	23	5.36	215	4.52



«ՎԵՈՒԼԻԱ ԶՈՒՐ» ՓԲԸ
ՀՀ, 0014, ք.երևան, Ն.Ադոնցի 6/1
ՀՀ, 0025, ք.երևան, Աբովյան 66ա
E-mail: info@vjur.am